ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 **Ո՞ր թվականին է Ռուսա I–ի հետ բախման արդյունքում Սարգոն II–ը անհաջողություն կրել.**

1) Ք. ա. 729 թ.
2) Ք. ա. 720 թ.
3) Ք. ա. 716 թ.
4) Ք. ա. 719 թ.

2 **Ե՞րբ են ռուսական զորքերը գրավել Ախալքալաքի բերդը.**

1) 1828 թ. հունիսի 23-ին
2) 1828 թ. օգոստոսի 15-ին
3) 1828 թ. հուլիսի 24-ին
4) 1828 թ. օգոստոսի 28-ին

3 **«Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին հայ–վրացական համաձայնագիրը կնքվել է՝**

1) 1920 թ. նոյեմբերի 13–ին
2) 1920 թ. հոկտեմբերի 31–ին
3) 1919 թ. նոյեմբերի 19–ին
4) 1920 թ. նոյեմբերի 18–ին

4 **Ե՞րբ է գրվել «Էջմիածնի Ավետարանը».**

1) 898 թ.
2) 998 թ.
3) 851 թ.
4) 989 թ.

5 **Ե՞րբ է Արտաշես I-ը վճռական հակահարված հասցրել Անտիոքոս IV-ին.**

1) Ք.ա. 183 թ.
2) Ք.ա. 165 թ.
3) Ք.ա. 162 թ.
4) Ք.ա. 189 թ.

6 **ՀԽՍՀ 16 շրջաններում հատուկ դրություն է մտցվել՝**

1) 1988 թ. նոյեմբերի 29–ից
2) 1988 թ. օգոստոսի 19–ից
3) 1988 թ. դեկտեմբերի 5–ից
4) 1989 թ. մայիսի 25–ից

7 Ե՞րբ է Լևոն I իշխանը բյուզանդացիներից գրավել Ադանա, Մսիս և Տարսոն քաղաքները.

1) 1131 թ.
2) 1132 թ.
3) 1134 թ.
4) 1133 թ.

8 Ե՞րբ է ավարտվել Արևելյան պատերազմը.

1) 1856 թ.
2) 1829 թ.
3) 1855 թ.
4) 1878 թ.

9 Քանի՞ գավառ ուներ Այրարատ նահանգը.

1) 15
2) 24
3) 20
4) 30

10 Ո՞ր ժողովում է ընդունվել «Սահմանադրութիւն կանոնական»–ը.

1) Աշտիշատի
2) Շահապիվանի
3) Դվինի I
4) Աղուենի

11 Սան Ռեմոյի խորհրդաժողովին ՀՀ-ից մասնակցում էին՝

1) Համո Օհանջանյանը և Պողոս Նուբարը
2) Պողոս Նուբարը և Ավետիս Ահարոնյանը
3) Ավետիս Ահարոնյանը և Ալեքսանդր Խատիսյանը
4) Ալեքսանդր Խատիսյանը և Համո Օհանջանյանը

12 Ո՞վ է վկայում այն մասին, որ հայերը ոչնչացրել են Մենոնի բանակը.

1) Խորենացին
2) Ստրաբոնը
3) Փարպեցին
4) Քսենոփոնը

13 Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատի ռուսական զորքի մարտակազմում որքա՞ն զինվորական էր առկա 1917 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ.

1) 158 000
2) 232 000
3) 185 000
4) 178 000

14 Ո՞վ էր գլխավորում 1992 թ. փետրվարին Խոջալուն գրաված հայկական ջոկատները.

1) Արկադի Տեր–Թադևոսյանը
2) Մոնթե Մելքոնյանը
3) Աշոտ Ղուլյանը
4) Սեյրան Օհանյանը

15 Այժմյան ո՞ր քաղաքի մոտ են գտնվում պատմական Լոռե քաղաքի ավերակները.

1) Վանաձոր
2) Ստեփանավան
3) Տաշիր
4) Ալավերդի

16 Որքա՞ն էր ռուսական կռվող բանակի թվակազմը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում.

1) 70 000
2) 42 000
3) 52 000
4) 60 000

17 Ո՞ր պատմիչն է հետևյալ նկարագրության հեղինակը.

«… հայերը, նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին:

Այնժամ Լուկուլլոսը, քանզի շատերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:

1) Ապպիանոսը
2) Ամմիանոս Մարկելինոսը
3) Պլուտարքոսը
4) Դիոն Կասիոսը

18 **Ո՞վ է ասել հետևյալ միտքը.**

«Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

1) Յակով Զարոբյանը
2) Վազգեն Սարգսյանը
3) Գրիգոր Հարությունյանը
4) Ասքանազ Մռավյանը

19 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է սխալ.**

1) Աքեմենյան տերությունում ստեղծված վարչական մեծ միավորները կոչվում էին սատրապություն:
2) Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական շրջանում արքայի տիտղոսը հայտնի էր «Հայոց թագավոր» անունով:
3) Դարեհ II–ի թողած եռալեզու արձանագրությունը հայտնի է «Բեհիսթունյան» անունով:
4) Հայկազուն–Երվանդունիների օրոք հիշատակվող գործակալներից մեկը կոչվում էր արքունի հացարար:

20 **Գտնել հասկացությանը համապատասխանող ճիշտ շարքը.**

Հետևյալ մելիքություններն ընդգրկող վարչական միավորը կոչվում էր Խամսայի մելիքություններ՝

1) Դիզակ, Ջրաբերդ, Վարանդա, Բերձոր, Գյուլիստան
2) Ջրաբերդ, Խաչեն, Գանձակ, Վարանդա, Քարագլուխ
3) Գյուլիստան, Գանձասար, Խաչեն, Սյունիք, Դիզակ
4) Վարանդա, Դիզակ, Խաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան

21 **Ինչո՞ւ Բագրատունիների օրոք Դվինը մայրաքաղաք չդարձավ.**

ա. Այն գտնվում էր Սյունիքում և, ընկած լինելով թագավորության ծայրամասային գավառում, համահայկական մայրաքաղաքի գործառույթներ չէր իրականացնում:
բ. Քաղաքը երկրաշարժից ավերվել էր և անմարդաբնակ դարձել:
գ. Այն Բագրատունիների հիմնական տիրույթներից՝ Շիրակից, դուրս էր գտնվում:
դ. Այն երեք կողմից ողողում էին Արաքսի ջրերը, ուստի նպատակահարմար չէր մայրաքաղաք դարձնել:
ե. Այն շարունակում էր մնալ արաբների ձեռքին:

1) գ, ե
2) բ, դ
3) ա, ե
4) գ, դ

22 **Թվարկվածներից որո՞նք են «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին» պատմական փաստաթղթի դրույթների կենսագործման արդյունքներ.**

ա. Բոլոր ձեռնարկությունները պետականացվեցին:
բ. Հանրապետությունում ամբողջ գործավարությունը կատարվում է միայն հայերենով:
գ. Վերկանգնվեցին Հայ առաքելական եկեղեցու ոտնահարված իրավունքները:
դ. Երկրի տնտեսության հիմքում դրվեցին պետական սեփականատիրական և պլանային տնտեսության սկզբունքները:
ե. Հայաստանը ստեղծեց սեփական դրամական միջոցները:
զ. ՀԽՍՀ–ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի պատմության մեջ սկսվեց երկրորդ հանրապետության շրջանը:

1) բ, գ, ե
2) ա, դ, ե
3) բ, գ, դ
4) ա, դ, զ

23 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը.**

ա. Առաջին եռապետության ստեղծումը Հռոմում
բ. Միհրդատ Եվպատորի ինքնասպանությունը
գ. Պտղոմայիս քաղաքի գրավումը Տիգրան Մեծի բանակի կողմից
դ. Զելա քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերի փայլուն հաղթանակը
ե. Արտաշատի հայ–հռոմեական հաշտության պայմանագրի կնքումը

1) դ
2) ա
3) ե
4) բ

24 **Սյունիքի ազատագրական պայքարի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Չավնդուրի ճակատամարտը
բ. Զևանշիր քոչվոր ցեղի դեմ տարած հաղթանակը
գ. Տաթև գյուղի մերձակա ամրոցի գրավումը
դ. Զևայի և Որոտանի բերդերի ազատագրումը
ե. Մեղրիի ազատագրումը
զ. Հալիձորի ճակատամարտը

1) բ, գ, դ, ա, ե, զ
2) բ, գ, ա, դ, զ, ե
3) գ, բ, դ, ա, զ, ե
4) գ, բ, ա, դ, ե, զ

25 **Կատարել համապատասխանեցում.**

Հայաստանի ո՞ր գավառներում են տեղի ունեցել ներքոհիշյալ իրադարձությունները.

ա. Ակոռիի ճակատամարտում հայերի փայլուն հաղթանակը պարսից զորքի նկատմամբ
բ. Զիրավի ճակատամարտը
գ. Արշակունի թագավորների դամբարանների թալանը պարսից զորքի կողմից
դ. Նվարսակի հայ-պարսկական պայմանագրի կնքումը
ե. Թեոդորոս Ռշտունու գլխավորած հայոց զորքի օգնության հասնելը Արծափ ամրոցին

1. Զարևանդ
2. Բագրևանդ
3. Մասյացոտն
4. Հեր
5. Կոգովիտ
6. Դարանաղյաց

1) ա–5, բ–4, գ–3, դ–1, ե–2
2) ա–3, բ–2, գ–6, դ–4, ե–5
3) ա–5, բ–2, գ–3, դ–4, ե–1
4) ա–3, բ–4, գ–6, դ–1, ե–5

26 **Հայ գիտնականների անունները համապատասխանեցնել իրենց գործունեության բնագավառներին.**

1. երկրաբանություն
2. արևելագիտություն
3. ֆիզիոլոգիա
4. քիմիա
5. պատմագիտություն

ա. Հովսեփ Օրբելի
բ. Մկրտիչ Ներսիսյան
գ. Գրիգոր Արեշյան
դ. Լևոն Օրբելի
ե. Ստեփան Ղամբարյան
զ. Տիգրան Ջրբաշյան

1) 1–զ, 2–ա, 3–դ, 4–ե, 5–բ
2) 1–զ, 2–ա, 3–զ, 4–դ, 5–բ
3) 1–ա, 2–գ, 3–զ, 4–ե, 5–դ
4) 1–զ, 2–ա, 3–դ, 4–բ, 5–զ

27 **VIII դարի հակաարաբական ապստամբություններին վերաբերող ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Գնալով Դվին՝ Արտավազդ Մամիկոնյանը խորամանկությամբ արաբ ոստիկանից զենք էր ստացել խալիֆայության թշնամիների դեմ կռվելու պատրվակով:
բ. Արձնիի ճակատամարտում զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և այլ տոհմերի նախարարներ, ինչպես նաև ռամիկներ՝ մոտ 3000 հոգի:
գ. Տայքում զինելով իր ռազմիկներին՝ Արտավազդ Մամիկոնյանը հարձակվեց արաբ գլխավոր հարկահանի վրա, խլեց հավաքված ամբողջ հարկը:
դ. Ջախջախելով Տարոն ներխուժած արաբական ջոկատը՝ Մուշեղ Մամիկոնյանն ընտանիքով ամրացավ Արտագերս ամրոցում:
ե. Կարինը զավթած արաբական կայազորից 6000 հեծյալ եկավ Բագավան գյուղ, որտեղ Մուշեղ Մամիկոնյանի ջոկատը ջախջախեց թշնամուն:

1) գ, ե
2) ա, դ
3) բ, ե
4) բ, գ

28 **Ե՞րբ է Տիգրան Մեծը հպատակեցրել Աղվանքը.**

1) Ք. ա. 94 թ.
2) Ք. ա. 91 թ.
3) Ք. ա. 93 թ.
4) Ք. ա. 92 թ.

29 **Ե՞րբ է մահափորձ կազմակերպվել Գոլիցինի դեմ.**

1) 1904 թ. հուլիսին
2) 1903 թ. հոկտեմբերին
3) 1903 թ. հուլիսին
4) 1904 թ. հոկտեմբերին

30 **Մեսրոպ Մաշտոցը ո՞ր քաղաքում հանդիպեց հունարեն գրչության արվեստի խորագիտակ Հռոփանոսին.**

1) Եդեսիա
2) Մծբին
3) Սամոսատ
4) Արշամաշատ

31 Ո՞վ է «Նատյուրմորտ դաշտային ծաղիկներով» կտավի հեղինակը.

1) Սարգիս Մուրադյանը
2) Սոնիա Պալասանյանը
3) Ռուդոլֆ Խաչատրյանը
4) Փարավոն Միրզոյանը

32 Ովքե՞ր են ստորագրել հետևյալ հրամանը.

... [ով] «կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

1) Նազրմը, Թալեաթը, Մ. Շյուքրին
2) Թալեաթը, Էնվերը, Նազրմը
3) Էնվերը, Ջեմալը, Բ. Շաքիրը
4) Թալեաթը, Նազրմը, Ջեմալը

33 Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

[նա վերականգնում է] «... հին սահմանը, որ առաջ գոյություն ուներ Հայոց երկրի և Վրաց երկրի միջև, որպիսինն էր մեծ գետ Կուրը»:

1) Ղազար Փարպեցու
2) Սեբեոսի
3) Մովսես Խորենացու
4) Փավստոս Բուզանդի

34 «Եռաբլուր» զինվորական պանթեոնում ո՞ւմ հուղարկավորության ժամանակ է ասվել հետևյալ խոսքը.

«Մեր հոգիները ցավում են ամեն մի անմահացման դեպքում, բայց մեր սրտերը գոտեպնդվում են մեր հերոսների վարքով, մեզ հաղորդում վճռականություն և հաստատականություն»:

1) Սասուն Մկրտչյանի
2) Ռոբերտ Աբաջյանի
3) Արմենակ Ուրֆանյանի
4) Թաթուլ Կրպեյանի

35 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները հայտնի են նաև բուն Աղվանք անունով:
2) Հռոմեական կայսրությանը 387 թ. բաժանումից հետո անցած Մեծ Հայքի արևմտյան մասի կառավարիչները կոչվում էին կոմեսներ:
3) Կիլիկիայի հայոց պետության կառավարման գլխավոր մարմինը կոչվում էր արքունի ժողով:
4) Միջնադարյան Հայաստանի քաղաքների արտաքին պարսպով շրջապատված հիմնական մասը՝ բուն քաղաքը կոչվում էր արվարձան:
5) Կիլիկյան Հայաստանում սպարապետի անմիջական տեղակալը կոչվում էր մարաջախտ:

36 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Նէպի տարիներին իր աշխատանքի շնորհիվ կայուն տնտեսություն ստեղծած ունևոր գյուղացին կոչվում էր կուլակ:
2) Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
3) 1923 թ. նոյեմբերին Երևանում գումարված այն համաժողովը, որտեղ հնչակյանները հանդես եկան իրենց կուսակցության վերացման մասին հայտարարությամբ, կոչվեց ինքնավերացման համագումար:
4) Լենինի մահից հետո Լ. Տրոցկու, Ս. Կիրովի և Լ. Կամենևի գլխավորությամբ հանդես եկած ընդդիմությունը հայտնի է տրոցկիստական անունով:
5) 1930–ական թթ. կեսերին ԽՍՀՄ–ում հաստատված համակարգը հայտնի է ամբողջատիրական անունով:

37 **Գտնել ճիշտ պատասխանները.**

Ի նշանավորումն հայ–հռոմեական դաշինքի վերականգնման՝ կայսր Մակրինոսը.

1) Տրդատ II-ին է վերադարձնում Հայաստանից թալանված ավարը:
2) Հայաստանից հեռացնում է հռոմեական լեգեոնները:
3) բանտարկությունից ազատում է Տրդատի հորը՝ Խոսրով արքային:
4) Տրդատ II-ին է վերադարձնում Կապադովկիայի կալվածքները, որոնք ստացել էր դեռևս Վաղարշ I–ը:
5) խոշոր գումար է վճարում Տրդատին, որպեսզի հայոց այրուձին հյուսիսում իրականացնի Կովկասյան լեռնանցքների և հարակից տարածքների պաշտպանությունը:
6) Տրդատ II-ին է վերադարձնում Հայաստանից տարված նրա մորը՝ թագուհուն:

38 **Եվրոպական տերություններն ինչո՞ւ էին 1894–1896 թթ. հայերին պաշտպանելու եռանդուն ջանքեր գործադրում.**

1) Ֆրանսիան ձգտում էր ամրապնդել իր ազդեցությունը Միջագետքում:
2) Ռուսաստանը ջանք չէր խնայում Արևմտյան Հայաստանում, սևծովյան նեղուցներում ու Բալկաններում Անգլիայի ուժեղացումը կանխելու համար:
3) Անգլիայի նպատակն էր չվնասել Թուրքիայում կատարած իր ֆինանսական ներդրումները:
4) Գերմանիայի ծրագրերում ուրվագծվում էր Բեռլին–Բաղդադ երկաթգծի շինարարության հեռանկարը:
5) Հանուն երկաթգծի շինարարության՝ Գերմանիան պատրաստ էր զոհաբերելու դրա ճանապարհին կանգնած արևելահայության կենսական շահերը:
6) Ավստրո-Հունգարիան ձգտում էր Անգլիային դուրս մղել Անդրկովկասից:

39 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Շահ Աբասը ֆրանսիական սպաների ու վարպետների օգնությամբ վերակազմել ու վերազինել էր պարսկական բանակը, ձուլվել էին թնդանոթներ:
2) Շահ Աբասը 1603 թ. սկսել է օսմանցիներին զիջած տարածքների վերագրավումը:
3) Շահ Աբասը, մեծ բանակով անցնելով Արաքսը, մտավ Նոր Ջուղա, ապա գրավեց Նախիջևանը:
4) XVII դ. սկզբին օսմանյան արքունիքում սկսվել էին երկապառակություններ, գահակալական պայքար, երկրում ծավալվում էին գյուղացիական ու զինվորական ապստամբություններ:
5) Հայ բնակչության տեղահանությունը սկսվել է 1604 թ. օգոստոսին:
6) Պարսից զորքը 1606 թ. վճռական ճակատամարտում պարտության է մատնել օսմանյան բանակին:

40 **Ստորև բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) ՀՀՇ առաջին համագումարի բացումը տեղի է ունեցել 1989 թ. հոկտեմբերի 4–ին:
2) 1991 թ. փետրվարին խորհրդարանն ընդունեց օրենք, որով ՀՀ–ում ստեղծվել է բազմակուսակցական համակարգ:
3) Ըստ ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալիստական պետություն է:
4) Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) ձևավորվել է 2008 թ. փետրվարին:
5) Հայաստանի Հանրապետությունում նախագահական հինգերորդ ընտրություններն անցկացվել են 2008 թ. փետրվարի 19–ին:
6) 2009 թ. վերջին ՀՀ-ում ստեղծվել է Հանրային խորհուրդ:

41 **Թվարկվածներից ո՞րն է խախտում իրադարձությունների տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) մոնղոլ պատվիրակների սպանությունը անեցիների կողմից
2) Կարսի և Դվինի գրավումը մոնղոլների կողմից
3) Շամքոր քաղաքի գրավումը մոնղոլների կողմից
4) Կարինի գրավումը մոնղոլների կողմից
5) Չմանկատուկի ճակատամարտը
6) Տարոնի, Վասպուրականի և Աղձնիքի ենթարկվելը մոնղոլներին

42 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Հայոց ազգային խորհրդի կողմից Հովհաննես Քաջազնունուն ՀՀ վարչապետ ընտրելը
2) գեներալ Սիլիկյանի հանդես գալը Ալեքսանդրապոլը գրավելու կոչով
3) Բաշ Ապարանի հաղթական հերոսամարտի սկիզբը
4) Անդրկովկասյան Սեյմի վերջին նիստի գումարումը
5) Ղարաքիլիսայի հերոսամարտի սկիզբը

43 **Հայոց արքաների անունները համապատասխանեցնել պատմիչների՝ նրանց վերաբերող կամ նրանց առնչվող խոսքերին.**

Ա. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:
Բ. Հայոց արքան ու նրա ընտանիքը.... «ցույց են տալիս իրենց ոգու արիությունը»:
Գ. «Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:
Դ. «Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:
Ե. «Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ…»:

1) Տիգրան Մեծ
2) Սանատրուկ
3) Արտաշես I
4) Տիգրան IV
5) Տիգրան I Երվանդյան
6) Արտավազդ II

Ա	Բ	Գ	Դ	Ե

44 **Գործիչների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

Ա. Նրա գլխավորած «Մրրիկ» ձիավոր խումբը, դուրս գալով Կարսից, անցավ սահմանը և 1903 թ. ամռանն անվնաս հասավ Սասուն:
Բ. Նրա գլխավորությամբ 1895 թ. աշնանը Մալաթիայի հայերը ջարդեցին ու քաղաքից դուրս քշեցին թուրք ոստիկաններին ու թուրքական խուժանին:
Գ. Նրա և մի քանի հայ հերոսների գլխավորությամբ շուրջ 250 հայդուկներ Խանասորի դաշտում անակնկալ հարձակվեցին քրդական մազրիկ ցեղի վրա:
Դ. Նրա տանը 1894 թ. հուլիսին հրավիրվեց ինքնապաշտպանական ժողով:
Ե. Նրա գլխավորությամբ 78–հոգանոց հայդուկ–կամավորների ջոկատն անցավ ռուս–թուրքական սահմանը և մարտի բռնվեց թուրքերի և քրդերի հետ:

1) Եղիշե քահանա Խաչատրյան
2) Պետո (Ալեքսանդր Պետրոսյան)
3) Սարգիս Կուկունյան
4) Գրգո (Գրիգոր Մոսեյան)
5) Թորգոմ
6) Նիկոլ Դուման

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

XIX դարի սկզբին՝

1) Արևելյան Հայաստանի մեծագույն մասը ենթակա էր Իրանին և կազմված էր Ղարաբաղի, Երևանի, Նախիջևանի, Գանձակի ու Մակուի խանություններից:
2) Երևանի ու Նախիջևանի խանությունների ավելի քան հազար բնակավայրերի մոտ 1/2–ը ամայի և անմարդաբնակ էր:
3) Ղարաբաղի խանությունը զբաղեցնում էր պատմական Արցախի տարածքը և Ուտիքի հյուսիսային մասը:
4) Արևելյան Վրաստանն ընդգրկող Քարթլի–Կախեթի թագավորության սահմաններում ներառված էին հայկական մի քանի գավառներ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը և Ղազախի հարավային մասը:
5) Երևանի խանության կառավարիչ քալանթարն օժտված էր ռազմավարչական մեծ իշխանությամբ:
6) Ղարաբաղի խանությունը մտել է նորաստեղծ Հայկական մարզի կազմը:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Փարպեցին Արտաշես Ի–ի ստեղծած վարչական միավորներն անվանում է ստրատեգիաներ, իսկ դրանց կառավարիչներին՝ ստրատեգոսներ:
բ. Զրադաշտականությունը իր բնույթով միաստվածային կրոն էր:
գ. Հայրենիքի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու համար Արտաշես Ի–ի ստեղծած չորս միավորները կոչվում էին զորավարություններ:
դ. Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը միմյանց կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»:
ե. Մենուան հարկատու դարձրեց Մելիդի թագավորությունը, որը հետագայում կոչվել է Մանա թագավորություն:
զ. Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հելլենիստական երևույթ է և հայոց մեջ տարածում է ունեցել այդ շրջանից:
է. Արգիշտի Ի–ի զորքերը հաղթարշավով հասել են Ալիշտու, այսինքն՝ Աղստևի հովիտ:

1) բ, դ, ե
2) գ, ե, է
3) ա, բ, զ
4) գ, դ, է

47 **Թվարկված գործառույթներից առանձնացնել երեքը, որոնք Արշակունյաց Հայաստանում տնօրինում էր հազարապետը.**

ա. արքունի կալվածքների հսկողություն
բ. ջրանցքների անցկացում, անտառատնկումների իրականացում
գ. արքունի գանձարանի հսկողություն
դ. քաղաքների ամրությունների կառուցում
ե. պալատական արարողությունների պատասխանատու
զ. ճանապարհների և կամուրջների կառուցում
է. Արշակունյաց սեպուհների դաստիարակություն

1) գ, դ, է
2) բ, դ, զ
3) ա, գ, ե
4) բ, ե, զ

48 **Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերից որո՞նք են ճիշտ.**

ա. Փետրվարյան հեղափոխության արդյունքում Ռուսաստանում առաջացավ երկիշխանություն:
բ. Փետրվարյան հեղափոխության պատճառով Ռուսաստանը դուրս եկավ համաշխարհային պատերազմից:
գ. Փետրվարյան հեղափոխության հետևանքով Անդրկովկասում իշխանության եկան բոլշևիկները:
դ. Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում Ռուսաստանում ձևավորվեց նոր կառավարություն՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը:
ե. Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով ամբողջովին փոխվեց Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը:
զ. Ռուսաստանի մայրաքաղաքում բոլշևիկների իրականացրած հեղաշրջման պատճառով Այսրկովկասում առաջացավ իշխանական ճգնաժամ:
է. Հոկտեմբերյան հեղաշրջման պատճառով ռուսական զորքերի մի մասը ևս մեկ տարի մնաց Արևմտյան Հայաստանում:

1) ա, դ, ե, զ
2) ա, ե, է
3) բ, գ, դ, զ
4) գ, դ, է

49 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը.**

ա. Մեծ եղեռնի տարելիցին նվիրված միջոցառումների անցկացումը 1965 թվականին հետևանք էր հայության ազգային ինքնագիտակցության զարթոնքի:
բ. Նէպի սկզբնական շրջանում շուկայական հարաբերությունների աշխուժացման հետևանքը դրամական հարկաձևը բնամթերայինով փոխարինելն էր:
գ. Խորհրդային Հայաստանում բնակչության կենսամակարդակի աճի հետևանքը սփյուռքահայության մեծ հայրենադարձությունն էր:
դ. Հայաստանում ազգային ինքնագիտակցության զարթոնքի պատճառը ԽՍՀՄ–ում ստալինիզմի վերացման գործընթացն էր:
ե. Խորհրդային Հայաստանում հայրենադարձության հետևանքը ՀԽՍՀ ժողովրդագրական իրավիճակի վատթարացումն էր:
զ. Հայաստանում այլախոհական կազմակերպությունների հանդես գալը պայմանավորված էր նաև կորցրած պատմական տարածքները վերադարձնելու գաղափարով:
է. Ստալինի անձի պաշտամունքի ձևավորման հետևանքը ԽՍՀՄ–ի հաջողություններում և հաղթանակներում ժողովուրդների դերի գերագնահատումն էր:

1) ա, դ, զ
2) բ, դ, ե
3) ա, դ, է
4) գ, ե, զ

50 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. հայ–հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում
բ. Տրդատ II–ի հաղթական արշավանքը դեպի Տիզբոն
գ. Խոսրով II–ի գահակալության սկիզբը
դ. Բակուր Արշակունու գահընկեց լինելը
ե. Վաղարշ II–ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը
զ. հռոմեա–պարսկական խաղաղության պայմանագրի կնքումը Մծբինում
է. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
ը. Հռոմի դեմ պատերազմ սկսելը Ներսեհ Սասանյանի կողմից
թ. Արտավազդ V-ի գահակալումը

1) թ
2) ը
3) է
4) գ

51 **Թվարկված եկեղեցիներից ո՞րն է կառուցվել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Զվարթնոցի տաճար
բ. Ավանի եկեղեցի
գ. Մրենի եկեղեցի
դ. Ս. Հռիփսիմե եկեղեցի
ե. Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի
զ. Վաղարշապատի Ս. Գայանե եկեղեցի
է. Թալինի եկեղեցի
ը. Մայր տաճար Ս.Էջմիածին
թ. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի

1) դ
2) զ
3) է
4) ա

52 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Պոտսդամի կոնֆերանսում հայկական տարածքների հարցի քննարկումը
բ. Նելսոն Ստեփանյանի զոհվելը
գ. 390–րդ դիվիզիայի մասնակցությունը Կերչի մարտերին
դ. ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի ձերբակալվելը
ե. Նվեր Սաֆարյանի նշանակվելը Թամանյան դիվիզիայի հրամանատար
զ. Կարապետ Սիմոնյանին ԽՍՀՄ հերոսի կոչում շնորհելը
է. 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմացրվելը
ը. ԽՍՀՄ կառավարության կողմից խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դենոնսացիայի ենթարկելը
թ. Լազր Չափչախյանին ԽՍՀՄ հերոսի կոչում շնորհելը

1) ա
2) բ
3) ը
4) է

53 **Համապատասխանեցնել կաթողիկոսների գահակալման տարիները նրանց անուններին.**

ա. Վրթանես Ա Պարթև
բ. Ստեփանոս Հռոմկլայեցի
գ. Մեսրոպ Արտազեցի
դ. Ներսես Ա Պարթև
ե. Գյուտ կաթողիկոս
զ. Հովսեփ Ա Վայոցձորցի

1. 439–452 թթ.
2. 353–373 թթ.
3. 333–341 թթ.
4. 1290–1293 թթ.
5. 461–478 թթ.
6. 1359–1372 թթ.
7. 452–464 թթ.

1) ա–3, բ–4, գ–5, դ–2, ե–6, զ–1
2) ա–7, բ–3, գ–5, դ–1, ե–4, զ–2
3) ա–3, բ–4, գ–6, դ–2, ե–5, զ–1
4) ա–4, բ–7, գ–6, դ–2, ե–5, զ–1

54 **Ընտրել սխալ պնդումները.**

ա. Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին՝ Ք. ա. 2492 թ., համարվել է Բուն Հայոց թվականի սկիզբը:

բ. Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհին՝ սկսած Ք. ա. IV հազարամյակից:

գ. Հայասան առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XIV դ. խեթական մի արքայի արշավանքների կապակցությամբ, որոնց ժամանակ նրա դեմ է դուրս գալիս այդ երկրի թագավոր Կարանին:

դ. Էթիունի երկրի համադաշնությունը ձևավորվել է Ք. ա. 830–ական թթ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում:

ե. «Նաիրի» անվամբ իրենց երկիրը կոչել են նաև Վանի թագավորության տիրակալներն ասուրերենով գրված արձանագրություններում:

զ. Թորգոմա տունը եղել է Եփրատի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս Ք. ա. XX–XVIII դարերում:

է. Ասուրա–բաբելական աղբյուրներում Հայաստանն «Ուրարտու» անվամբ հիշատակվում է մինչև Ք. ա. VI դարի առաջին կեսը:

1) ա, գ, զ
2) բ, դ, է
3) գ, դ, ե
4) բ, զ, է

55 **Ընտրել ճիշտ պնդումները.**

ա. Հայաստանում կենտրոնացված պետության ստեղծման գլխավոր խոչընդոտ հանդիսացավ Բյուզանդական կայսրությունը, որը, տիրելով երկրի մեծ մասին, վերջ տվեց նաև Անիի Բագրատունյաց թագավորությանը:

բ. XI դ. սկզբին Սյունիքն ուներ 8 քաղաք, 72 ամրոց ու բերդ, 40 վանք և 1000–ից ավելի գյուղ ու ավան:

գ. Տաշիր–Զորագետի թագավորությունն առավել հզորության հասավ Գուրգենի՝ մոտ 60 տարի տևած կառավարման շրջանում:

դ. Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր ավագ որդին, հաճախ նաև եղբայրը:

ե. Բագրատունյաց ենթակա թագավորություններից Սյունիքի թագավորությունն ամենաընդարձակն էր, սակայն գոյատևեց ամենակարճը:

զ. Բյուզանդական Կոստանդին Մոնոմախ կայսրը Սենեքերիմ Արծրունուն հարկադրեց կայսրությանը հանձնել Վասպուրականը:

է. Անիի Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II–ը հաստատվել էր Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պիզու քաղաքում:

1) ա, դ, է
2) բ, գ, ե
3) ա, դ, զ
4) գ, զ, է

56 **Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրում.**

ա. Հայաստանի կառավարությունը պետք է ղեկավարեր ազգությամբ հայ նախարարը:
բ. Հայոց թագավորն ընտրվելու էր ռուսական կայսրի կողմից, իսկ օծումը պետք է տեղի ունենար Էջմիածնում:
գ. Արցախի մելիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավոր:
դ. Նախկին հողատերերին վերադարձվելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ճորտացնելու իրավունքի:
ե. Հայաստանի կառավարությունը Աստրախանում պետք է ունենար իր դեսպանը:
զ. Հայաստանին տրամադրվելու էր նավահանգիստ Սև ծովի ափին:
է. Հայաստանի և Ռուսաստանի միջև առաջարկվում էր կնքել հավիտենական դաշինք:

1) ա, ե, զ
2) բ, դ, է
3) գ, դ, ե
4) բ, զ, է

57 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն	**Պաշտոն**
1. Համո Օհանջանյան	ա. «Ղարաբաղ կոմիտեի» անդամ
2. Հենրիխ Պողոսյան	բ. Հայհեղկոմի նախագահ
3. Ստեփան Շահումյան	գ. Ախալցխայի քաղաքապետ
4. Զորի Զորյան	դ. ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
5. Սարգիս Կասյան	ե. Անդրկոմիսարիատի անդամ
6. Սահակ Տեր–Գաբրիելյան	զ. Բաքվի կոմունայի ղեկավար
7. Վաչե Սարուխանյան	է. Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ
	ը. ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմ

1) 1–ը, 2–դ, 3–զ, 4–գ, 5–ե, 6–է, 7–բ
2) 1–ե, 2–ա, 3–զ, 4–է, 5–բ, 6–ը, 7–դ
3) 1–ե, 2–դ, 3–զ, 4–գ, 5–բ, 6–է, 7–ա
4) 1–ե, 2–գ, 3–բ, 4–դ, 5–զ, 6–ը, 7–ա

58 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
2) Քրդական կառավարական ջոկատները հայտնի են նաև «չելլոներ» անունով:
3) Առաջին հայ քաղաքական լրագիրը կրում էր «Անկախության լրաբեր» անվանումը:
4) Բրեստ–Լիտովսկի բանակցությունների երկրորդ փուլում բոլշևիկների առաջ քաշած սկզբունքը կոչվում էր «հաշտություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների»:
5) Ֆիդա կամ ֆեդա հունգարերեն նշանակում է ինքնազոհ:
6) Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար 1912 թ. Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվել է Հայոց ազգային կենտրոնական բյուրո:
7) Ցարական ինքնակալության տապալումից քիչ հետո Անդրկովկասում ստեղծված իշխանության մարմինը կոչվում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտե:
8) Միջագետքի ճակատում 1918 թ. թուրքերի դեմ կռված հայկական զորամիավորը կոչվում էր Արևելյան (Հայկական) լեգեոն:
9) Արևմտահայ զորաբաժնի ստեղծման նպատակով կյանքի կոչված գործադիր նոր մարմինը կոչվում էր Հայաստանի ապահովության խորհուրդ:

59 **Տրված բացատրություններից որո՞նք են սխալ բնութագրում տերմինների կամ հասկացությունների բովանդակությունը.**

1) Հաճընում Պետրոս Սարաճյանի նախագահությամբ քեմալականների դեմ հայերի դիմադրությունը կազմակերպող մարմինը հայտնի է ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ անունով:
2) Ըստ ԽՍՀՄ և ազգային հանրապետությունների սահմանադրությունների՝ պետության տնտեսական հիմքը երկրի կառավարումն իրականացնող խորհուրդներն էին:
3) Արթուր Մկրտչյանի նախագահությամբ ԼՂՀ պաշտպանության նպատակով ստեղծված մարմինը կոչվում էր ԼՂՀ Պաշտպանության խորհուրդ:
4) ԱՄԿ ղեկավար մարմնի՝ Խորհուրդի, Պ. Հայրիկյանի նախաձեռնությամբ որդեգրած ռազմավարությունը հայտնի է «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով» անվամբ:
5) 1925 թ. կազմավորված Գիտության և արվեստի ինստիտուտի բարձրագույն մարմինը կոչվում էր հասարակական և կիրառական գիտությունների զարգացման խորհուրդ:
6) Հայրենադարձության գործում մեծ դեր խաղացած սփյուռքահայ կազմակերպությունը կոչվում էր Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե:
7) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի հրավիրումը նախաձեռնող մարմինը կոչվում էր Կոմինտերնի գործադիր կոմիտե:
8) Արցախահայության առաջին համագումարի կողմից կազմված մարմինը կոչվում էր «Ղարաբաղի ժողովրդական ժողով»:

60 **Թվարկվածներից որո՞նք են Արտաշես I–ի իրականացրած հողային բարեփոխման հետևանքներ.**

1) Պահպանվեց համայնքային հողային սեփականությունը:
2) Հողեր ժառանգելու իրավունք շնորհվեց իշխանական տների կրտսեր ներկայացուցիչներին:
3) Օրինականացվեցին ագարակատերերի՝ մինչ այդ կատարած զավթումները:
4) Կասեցվեցին մասնավոր հողային խոշոր տնտեսությունների հետագա մասնատումն ու փոշիացումը:
5) Օրինազանց ագարակատերերը խոշոր տուգանք վճարեցին արքունական գանձարանին, և համայնքներին վերադարձվեցին նրանցից խլված հողերը:
6) Հողեր ժառանգելու իրավունք շնորհվեց նաև իշխանական տների իգական սեռի ներկայացուցիչներին:
7) Մասնավոր հողային տնտեսությունների սահմանները հստակորեն սահմանազատվեցին համայնքին պատկանող հողերից:

61 **Թվարկվածներից որո՞նք ճիշտ չեն արտահայտում հայկական միջնադարյան մշակութային կյանքին վերաբերող պատճառահետևանքային կապերը.**

1) Հայոց գրերի գյուտի անմիջական արդյունքում Հայաստանում սկսվեց կրթական և գիտական կյանքի վերելք:
2) Դավիթ Անհաղթի տոմարագիտական հաշվումների արդյունքում վաղ միջնադարում ներդրվեց «Անշարժ տոմար»:
3) Վաղ միջնադարում պատմագիտական մտքի զարգացման արդյունքում հաղթահարվեց հայոց պատմության կրոնաաստվածաշնչյան մոտեցումը:
4) Զարգացած միջնադարում հայկական տոմարագիտական մտքի նվաճումների արդյունքում հնարավոր դարձավ Հայոց մեծ թվականի սահմանումը:
5) Զարգացած միջնադարում կրթության առջև նոր պահանջներ դրվեցին, որովհետև հասարակությանն անհրաժեշտ էին ոչ միայն կրոնափիլիսոփայական, այլ նաև կիրառական գիտելիքներ ունեցող մարդիկ:
6) Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու ղեկավարության արդյունքում XIV դ. երկրորդ կեսին և XV դ. սկզբին բեղմնավոր գործունեություն ծավալեց Տաթևի համալսարանը:
7) Հայկական տպագրության ստեղծման շնորհիվ նոր ուղի բացվեց հայ ժողովրդի մեջ լուսավորության տարածման համար:
8) Ուշ միջնադարում Հայաստանի տնտեսական ու քաղաքական ծանր կացությունը առանձնապես բացասական հետևանքներ թողեց մանրանկարչության բնագավառում:

62 **Ընտրել սխալ փաստարկները.**

1) 1885 թ. Վանում Մկրտիչ Փորթուգալյանը հիմնել է Արմենականների կուսակցությունը:
2) 1891 թ. սկզբին կնքված համաձայնագրով Հնչակյան կուսակցությունը միացել է ՀՅԴ–ին:
3) 1892 թ. Երևանում տեղի է ունեցել ՀՅԴ առաջին համագումարը:
4) 1917 թ. դեկտեմբերի 5–ին Երզնկայում ստորագրվել է զինադադարի համաձայնագիր Անդրկոմիսարիատի և Թուրքիայի միջև:
5) 1917 թ. մայիսի 2–11–ը Երևանում կայացել է արևմտահայերի երկրորդ համագումարը:
6) 1918 թ. մարտի 1–ին Հայկական կորպուսի և արևմտահայ զինուժի միավորումից ստեղծվել է Առանձին հայկական կորպուսը:
7) 1918 թ. մայիսի 16–27–ը Սառնաղբյուրի ճակատում տեղի են ունեցել հայկական ուժերի հաղթական կռիվներ թուրքերի դեմ:
8) 1918 թ. մայիսի 27–ից Բաթումում սկսվել են հաշտության բանակցություններ Թուրքիայի և Հայաստանի միջև:

63 **Ընտրել Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի մամլուքների հարաբերություններին վերաբերող սխալ պնդումները.**

1) Անտիոքի իշխանության դեմ մի քանի արշավանք կազմակերպելուց հետո մամլուքները որոշեցին հարձակվել Կիլիկիայի վրա:
2) Մամլուքների հարձակումը Կիլիկիայի վրա տեղի ունեցավ 1265 թվականին:
3) Մամլուքների հարձակման ժամանակ Հեթում I թագավորը օգնություն ստացավ մոնղոլներից ու խաչակիրներից:
4) Հայ–եգիպտական զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մառի կոչված վայրում:
5) Մառիի ճակատամարտում Հեթում I–ի որդի Լևոնը սպանվեց, իսկ Թորոսը գերի ընկավ:
6) Մամլուքներին անհանգստացնում էր մոնղոլա–հայ–խաչակրաց ռազմաքաղաքական դաշինքը:
7) Մառիի ճակատամարտը և 1268 թ. Անտիոքի անկումը վերջ դրեցին Հեթումի՝ քրիստոնեա–մոնղոլական դաշինք ստեղծելու ծրագրին:

64 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) 1921 թ. Ազգերի լիգայում հայերի համար ‹‹ազգային օջախ›› ստեղծելու մասին որոշումով միջազգայնորեն ճանաչվեց Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքը:
2) 1991 թ. նոյեմբերի 21-ին Լիտվայի Հանրապետությունը առաջինը ճանաչեց ՀՀ անկախությունը:
3) ԵԱՀԿ-ն ամրագրել է, որ «որպես ԵՄ լիիրավ անդամակցության նախապայման»՝ Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը:
4) 1970 թ. Ուրուգվայի խորհրդարանը հանձնարարեց իր կառավարությանը Հայկական հարցը ներկայացնել ՄԱԿ-ի քննարկմանը:
5) Սևրի պայմանագրով Հայաստանի սահմանները անդրկովկասյան մյուս հանրապետությունների հետ որոշվելու էին կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ տարաձայնությունների դեպքում սահմանագիծը նշելու էր ԱՄՆ նախագահը:
6) 1983 թ. Եվրախորհուրդը սկսեց քննարկել Հայոց ցեղասպանության հիմնահարցը:
7) 2001 թ. ԵՄ և ՀՀ միջև կնքվել է փոխադարձ օգնության պայմանագիր:

65 **Իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Փառանձեմ թագուհու ամրանալը Արտագերս ամրոցում և հերոսական դիմադրությունը
2) Պապի վերադարձը Հայաստան՝ Տերենտիոսի գլխավորած զորաջոկատով
3) Մուշեղ Մամիկոնյանի դառնալը հայոց սպարապետ
4) Շապուհ II–ի զորքերի ջախջախումը Գանձակի մոտ և խաղաղության վերականգնումը Հայաստանում
5) Պապի հրամանով հայոց զորքերի հավաքվելը Ձիրավի դաշտում
6) Մերուժան Արծրունու ձերբակալությունը և մահապատիժը
7) Ատրպատականում Շապուհ II–ի գանձարանին և կանանոցին տիրանալը հայերի կողմից
8) Պապ թագավորի փախուստը ծուղակից և վերադառնալը Տարսոնից Հայաստան

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) «Սև խաչ» գաղտնի կազմակերպության ձևավորումը
2) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության դատավարությունը
3) Կ. Պոլսում հայկական առաջին մշտական թատերական խմբի կազմումը
4) առաջին գիտական հայ պարբերականի հրատարակման սկիզբը
5) Գրիգոր Արծրունու գլխավորած գաղտնի խմբակի ստեղծումը
6) Նապոլեոն III կայսեր անունից Ֆրանսիայի դեսպանի պահանջը Զեյթունի պաշարումը դադարեցնելու վերաբերյալ
7) Մկրտիչ Խրիմյանի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք դառնալը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Տուշպան գրավելու Թիգլաթպալասար III–ի անհաջող փորձը
2) Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը
3) Պարույր Նահապետի թագադրվելը Մարաստանի արքայի կողմից
4) Արգիշտի II–ի գահակալման ավարտը
5) Կարքեմիշ քաղաքի գրավումը դաշնակից զորքերի կողմից
6) Վանի թագավորության գրային բարեփոխումը՝ տեղական սեպագրի ստեղծումը
7) Ասորեստանի Սենեքերիմ արքայի սպանվելը իր որդիների կողմից

68 **Վայրերը համապատասխանեցնել Գրիգոր Լուսավորչի գործունեության հետ կապված իրադարձություններին.**

Ա. Գրիգորի բանտարկությունը
Բ. Գրիգորի ձեռնադրությունը եպիսկոպոս Ղևոնդիոսի կողմից
Գ. արքայական ընտանիքի և հայոց զորքի կողմից Գրիգորին դիմավորելը
Դ. Իննակնյան Ս. Կարապետ եկեղեցու հիմնադրումը
Ե. աշխարհիկ կյանքից առանձնացումը և անցումը ճգնավորական կյանքին
Զ. Ս. Երրորդություն եկեղեցու հիմնադրումը

1) Եկեղյաց գավառ՝ Սեպուհ լեռան Մանյա այրք
2) Աշտիշատ
3) Տարոն՝ Քարքե լեռան լանջ
4) Մաժակ
5) Դարանաղյաց գավառ՝ Սեպուհ լեռան Մանյա այրք
6) Բագավան՝ Նպատ լեռան ստորոտ
7) Խոր Վիրապ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Ստեղծագործությունների անվանումները համապատասխանեցնել հեղինակների անուններին.**

Ա. Եղիշե Թադևոսյան
Բ. Ալեքսանդր Երիցյան
Գ. Վարդգես Սուրենյանց
Դ. Հովհաննես Այվազովսկի
Ե. Ստեփանոս Պալասանյան
Զ. Գևորդ Բաշինջաղյան
Է. Աբրահամ Երևանցի

1) «Քննական պատմութիւն Հայոց»
2) «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը»
3) «Պատմութիւն Հայոց»
4) «Խրիմյան Հայրիկը Էջմիածնում»
5) «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում»
6) «Զանգեզուր»
7) «Պատմութիւն պատերազմաց»
8) «Սալոմե»

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) Հայաստանի նորահաստատ բոլշևիկյան վարչակարգը քաղաքական հետապնդումներ և բռնություններ է գործադրել միայն հայկական բանակի սպայակազմի և Առաջին հանրապետության կառավարության անդամների նկատմամբ:
2) Մոսկվա մեկնած Ա. Բեկզադյանի գլխավորած հայկական պատվիրակությունը այն տեսակետին էր, որ ՀՍԽՀ սահմաններում պետք է լինեն 1920 թ. թուրք–հայկական պատերազմի ավարտի դրությամբ ՀՀ–ին պատկանող տարածքները:
3) Ի տարբերություն Մոսկվայի բոլշևիկա-քեմալական պայմանագրի, որով Նախիջևանի մարզի խնամակալությունը Ադրբեջանը իրավունք չուներ զիջելու «մի երրորդ պետության», Կարսի պայմանագրում այդ պայմանը չկար:
4) ՀՍԽՀ կառավարությունը 1921 թ. հունիսի 13–ին պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումն ընդունելու հերթական կոչն է ուղղել Արցախի կառավարությանը՝ նշելով, որ երկրամասը լինելու է Հայաստանի կազմում:
5) Մեծ հայրենադարձության տարիներին Խորհրդային Հայաստան ավելի շատ մարդ է հայրենադարձվել, քան1921–1936 թթ. և 1950–1982 թթ. ընթացքում միասին վերցրած:
6) ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. հուլիսի 4–ի նիստում ընդունել է ոչ օրինական որոշում՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ: